ԱՐՇԱՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույնով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) իր հաճախորդներին առաջարկում է մասնակցել սույն փաստաթղթով սահմանված արշավին (այսուհետ՝ Արշավ)՝ դրանով սահմանված պայմաններին ու կանոններին համապատասխան: Արշավի պայմաններին համապատասխան որևէ գործարք կատարելով՝ Հաճախորդն անվերապահորեն ընդունում է Արշավի պայմաններն ամբողջ ծավալով:

1.2. Արշավը նախատեսված է ֆիզիկական անձ հաճախորդների համար:

1.3. Արշավն իրականացվում է Բանկի կողմից (հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, conversebank.am):

2. Արշավի մասնակիցները

2.1. Արշավին կարող են մասնակցել ՀՀ ֆիզիկական անձ Բանկի այն հաճախորդները (այսուհետ՝ Հաճախորդ), ովքեր

- ունեն Բանկի կողմից Mastercard միջազգային վճարային համակարգի ներքո թողարկված ակտիվացված վճարային քարտ, կամ
- Արշավի գործողության ընթացքում կակտիվացնեն C360 Բանկային ծառայությունների փաթեթներից 1 (մեկը)՝ սկսած Neo Light փաթեթից, իրենց փաթեթում կներառեն գործող կամ կակտիվացնեն Բանկի կողմից Mastercard միջազգային վճարային համակարգի ներքո թողարկված նոր քարտ, վճարային քարտը կկցեն «Yandex Go» հավելվածին (այսուհետ՝ Հավելված) և կկատարեն առնվազն 1 (մեկ) վճարում:

2.2. Արշավին մասնակցում են Բանկի կողմից Mastercard միջազգային վճարային համակարգի ներքո թողարկված ակտիվացված վճարային քարտերը (այսուհետ՝ Քարտ):

2.3. Արշավին մասնակցելու համար հաճախորդը պետք է Քարտը կցի «Yandex Go» հավելվածին և Հավելվածի միջոցով իրականացնի տաքսի ծառայության պատվերների (նվազագույնը Comfort դասի) վճարումները:

3. Արշավի պայմանները

3.1. Արշավն իրականացվում է 08.06.2026-30.06.2026թթ. (ներառյալ) ժամանակահատվածում:

3.2. Արշավի գործողության ընթացքում Հաճախորդները Հավելվածի տաքսի ծառայությունից (նվազագույնը Comfort դասից) օգտվելիս կստանան 10%-ի չափով զեղչ՝ ուղևորության արժեքից, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 1,500 ՀՀ դրամ յուրաքանչյուր օգտատիրոջ համար՝ Արշավի ողջ ժամանակահատվածի ընթացքում:

3.3. Այն Հաճախորդներն, ովքեր Արշավի գործողության ընթացքում կակտիվացնեն C360 Բանկային ծառայությունների՝ Արշավում նշված փաթեթներից մեկը, իրենց փաթեթում կներառեն գործող Քարտ կամ կակտիվացնեն նոր Քարտ, այդ քարտը կկցեն Հավելվածին և կկատարեն առնվազն 1 (մեկ) վճարում՝ կստանան 5,000 ՀՀ դրամ գումարի (առանց հարկերի) չափով պրոմոկոդ (այսուհետ՝ Պրոմոկոդ), որը կարող են օգտագործել հաջորդող 10 (տասը) ուղևորությունների համար՝ 500 ՀՀ դրամ գումարի չափով՝ յուրաքանչյուր ուղևորության դիմաց, ընդ որում՝ Պրոմոկոդը կարող է օգտագործվել մինչև 31.12.2026թ.-ը:

3.4. Արշավի պայմանները գործում են միայն Հավելվածում կատարված անկանխիկ վճարումների դեպքում:

3.5. Արշավի շրջանակներում Հավելվածով վճարումները պետք է կատարվեն Քարտի միջոցով:

3.6. Արշավի շրջանակում կանխիկ վճարումները չեն մասնակցում առաջարկին:

3.7. Բանկը պատասխանատվություն չի կրում Հավելվածի տեխնիկական խափանումների, վճարային համակարգերի անհասանելիության կամ երրորդ կողմերի համակարգերի աշխատանքի խափանումների համար:

3.8. Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել, դադարեցնել կամ վերանայել Արշավի պայմանները՝ համապատասխան տեղեկատվությունը հրապարակելով պաշտոնական հաղորդակցման հարթակներում:

3.9. Արշավի ամբողջական պայմանները հասանելի կլինեն Բանկի պաշտոնական հաղորդակցման հարթակներում և համապատասխան տեղեկատվական նյութերում:

4. Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- զանգահարել՝ +374 10 511211
- գրել՝ info@conversebank.am
- կապ հաստատել WhatsApp-ով՝ +374 95 511211
- այցելել Բանկի պաշտոնական սոցիալական էջեր